Fintechaudit

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորական եզրակացություն

«Այբ» կրթական հիմնադրամ

31 դեկտեմբերի 2011թ.

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

Fintechaudit

«ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

Պռոշյան 2/1, Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն
իրավ. հասցե՝ Գր. Արծրունու 78/3 շ, բն. 47
2/1 Proshyan str., Yerevan 0019, Republic of Armenia
Legal address: 47 apt. Gr. Artsruni str., 78/3

Լիցենզիա/License N ԱՕ/ATS 072
Հեռ/Tel: (374 10) 229 238
Ֆաքս/Fax: (374 10) 229 278
www.fintechaudit.am / info@fintechaudit.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին.

Մենք աուդիտի ենք ենթարկել «Այբ» կրթական հիմնադրամի կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2011թ. դեկտեմբերի 31-ի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն

Հիմնադրամի տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռքբերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհարժեշտ ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, սակայն ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով:

Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Այբ» կրթական հիմնադրամի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

11 մայիսի, 2012թ.

Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-բաժնետեր

Աննա Գրիգորյան
Աուդիտոր-բաժնետեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЕРЕВАН ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
REPUBLIC OF ARMENIA YEREVAN CLOSED JOINT-STOCK COMPANY
00101437
«ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ»
«ФИНТЕХ АУДИТ»
"FINTECH AUDIT"

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4	9,460	8,328	6,562
Ոչ նյութական ակտիվներ		442	492	-
Նվազագույն շահութահարկ		-	-	289
Հետաձգված հարկային ակտիվներ	5	1,543	-	-
		11,445	8,820	6,851
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ		8,710	13,936	3
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	21,224	691	-
Փոխառություններ	7	-	4,404	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	96,736	71,670	2,522
		126,670	90,701	2,525
Ընդամենը ակտիվներ		138,115	99,521	9,376
Սեփական կապիտալ				
Կուտակված շահույթ/(վնաս)		(14,438)	1,665	208
		(14,438)	1,665	208
Պարտավորություններ				
Երկարաժամկետ պարտավորություններ				
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	9,902	19,966	6,194
		9,902	19,966	6,194
Կարճաժամկետ պարտավորություններ				
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	-	73,880	615
Փոխառություններ	10	99,934	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	42,532	3,612	2,359
Շահութահարկի գծով պարտավորություն		185	398	
		142,651	77,890	2,974
Ընդամենը պարտավորություններ		138,115	99,521	9,376

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2012թ.մայիսի 11-ին՝

Գործադիր տնօրեն
Դավիթ Սահակյան

Գլխ. հաշվապահ
Ջանիկ Պետրոսյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ մրցույթների մասնակցության վճարներից	12	38,003	42,444
Եկամուտ շնորհներից	9	865,068	109,515
Այլ եկամուտներ		414	340
		903,485	152,299
Մաշվածություն և ամորտիզացիա		(4,296)	(4,392)
Աշխատավարձի գծով ծախս		(144,762)	(53,340)
Նյութական ծախսեր		(143,134)	-
Շինարարական աշխատանքներ		(496,250)	-
Այլ ծախսեր		(128,361)	(91,338)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		(13,318)	3,229
Ֆինանսական ծախսեր	13	(3,496)	-
Այլ ֆինանսական արդյունքներ,զուտ	14	(647)	(1,086)
Շահույթ/(վնաս) մինչև հարկելը		(17,461)	2,143
Շահութահարկի գծով(ծախս)/փոխհատուցում	15	1,358	(686)
Զուտ շահույթ/(վնաս)		(16,103)	1,457
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		(16,103)	1,457

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ/(վնաս)	(16,103)	1,457
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	4,296	4,392
Տոկոսային ծախս	3,496	-
Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում	(1,358)	686
Շնորհից եկամուտ	(865,068)	(109,515)
Փոխարժեքային տարբերությունից վնաս	647	1,086
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	(874,090)	(101,894)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(20,533)	(691)
Պաշարների փոփոխություն	5,226	(13,933)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	39,146	1,250
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(850,251)	(115,268)
Վճարված շահութահարկ	(398)	-
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(850,649)	(115,268)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(5,378)	(6,649)
Փոխառություններից զուտ մուտքեր	4,404	(4,404)
Շնորհների ստացում	781,124	196,552
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	780,150	185,499
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառություններ զուտ	92,643	-
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	92,643	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ / (նվազում)	22,144	70,231
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	2,922	(1,083)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	71,670	2,522
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	96,736	71,670

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Այբ» կրթական հիմնադրամը ստեղծվել է 2006թ. դեկտեմբերի 04-ին: Հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի հիմնական նպատակն է՝

- Հայաստանում ստեղծել բարձրորակ, բազմաբևեռ, օրինակելի կրթական միջավայր,
- նպաստել երկրի կրթական համակարգի զարգացմանն ու կատարելագործմանը,
- աջակցել դպրոցականներին և երիտասարդներին ուսման և իրենց կարիերայի զարգացման հարցում,
- օժանդակել կրթական ոլորտի կազմակերպություններին:

2011թ. հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 36 մարդ (2010թ.՝ 19 մարդ):

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կորյունի 19ա:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Մինչև այժմ ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում էին համաձայն Հայաստանի հանրապետության հաշվապահական ստանդարտների (ՀՀՀՀՍ): Հիմնադրամն առաջին անգամ է ներկայացնում իր ֆինանսական հաշվետվությունները համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների: ՀՀՀՀՍ-ի և ՖՀՄՍ-ի միջև առկա տարբերություններն էականորեն չեն վերաբերվում ընկերության ֆինանսական հաշվետվություններին: Այդ պատճառով ՖՀՄՍ-ի անցման արդյունքում էական ճշգրտումներ չեն կատարվել ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով՝ պատմական արժեքի հիման վրա:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է («դրամ»), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կատարի կարևոր գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրությունները և գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն են:

2.5 ՀՀՄՍ 1 համաձայն ֆինանսական հաշվետվությունների ներկայացում (վերանայված 2007թ.)

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի համաձայն (վերանայված 2007թ.): Հիմնադրամն որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով, երկու առանձին հաշվետվությունների փոխարեն (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն և, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն):

Համաձայն ՖՀՄՍ-ի Հիմնադրամը ներկայացնում է ֆինանսական վիճակի մասին երեք հաշվետվություն՝ ՖՀՄՍ հիմքով պատրաստված իր առաջին հաշվետվություններում: Հետագայում, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում Հիմնադրամը ներկայացնելու է երկու համադրելի ժամանակաշրջաններ միայն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հետընթաց կիրառման, ֆինանսական հաշվետվություններում հոդվածների հետընթաց վերաներկայացման, կամ ֆինանսական հաշվետվություններում հոդվածների վերադասակարգման դեպքերում:

2.6 ՖՀՄՍ 9. Ֆինանսական գործիքներ

2009թ. նոյեմբերին թողարկված և 2010թ. հոկտեմբերին փոփոխված ՖՀՄՍ 9 ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապաճանաչման նոր պահանջներ է ներկայացնում:

ՖՀՄՍ 9 ուժի մեջ կմտնի 2015թ. հունվարի 1-ին սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Ղեկավարությունը դեռևս չի գնահատել նշված փոփոխության կիրառման հնարավոր ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը. 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 385.77 ՀՀ դրամ,1 ԵՎՐՈ՝ 498.72 ՀՀ դրամ , 1 Ռուբլի 11.91դրամ (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 363.44 ՀՀ դրամ 1 ԵՎՐՈ՝ 481.16 ՀՀ դրամ, 1 Ռուբլի 11.98դրամ): Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Մաշվածությունը ճանաչվում է եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է պատրաստ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա	- 1 տարի
Մեքենա, սարքավորումներ	- 5 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվները օգտակար

ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրերի համար:

3.4 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.5 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Կազմակերպության միջոցները հիմնականում ձևավորվում են նվիրատվություններից: Հիմնական նվիրատուն հանդիսանում է հոգաբարձուների խորհրդի նախագահ պրն Ռազմիկ Թադէոսեանը:
Ստացված նվիրատվությունները ձևակերպվում են որպես «Ակտիվներին վերաբերող շնորհներ»: Նվիրատվությունները ներկայացվում են ստացման արժեքով: Համապատասխան եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այն նվիրատվությունները, որոնց արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն որոշել, հաշվառվում են իրենց շուկայական արժեքով:

Ակտիվներին վերաբերող շնորհները հաշվապահական հաշվեկշռում ներկայացված են որպես ակտիվներին վերաբերող շնորհներ: Դրանք համապատասխան ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում ճանաչվում են եկամուտ պարբերաբար և տրամաբանական հիմունքով:

3.6 Փոխհատուցումներ աշխատակիցներին

Հիմնադրամը աշխատակիցների օգտին հատկացումներ է կատարում Հայաստանի Հանրապետության Սոցիալական Ապահովագրության Պետական Հիմնադրամին: Հատկացումները ծախսագրվում են կատարման պահին:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնց իրական արժեքի փոփոխությունները վերագրվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

3.8 Շահութահարկ

Հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է: Հիմնադրամի անհատույց ստացված ակտիվները և դրանց հաշվին կատարված ծախսերը շահութահարկի տեսանկյունից հարկվող տարրեր չեն:

3.9 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Հիմնադրամի հասույթը ձևավորվում է "Կենգուրու" մաթեմատիկական և "Ռուսական արջուկ" ռուսաց լեզվի մրցույթների կազմակերպումից:

4.Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Մեքենա, սարքա-վորումներ	Արտադրական, տնտեսական գույք,այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	6,065	8,004	14,069
Ավելացում	4,496	1,654	6,150
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,561	9,658	20,219
Ավելացում	5,338	40	5,378
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,899	9,698	25,597
Կուտակված մաշվածություն			
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	4,294	3,213	7,507
Տարվա ծախս	2,711	1,673	4,384
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,005	4,886	11,891
Տարվա ծախս	4,216	30	4,246
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,221	4,916	16,137
Հաշվեկշռային արժեք			
2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,771	4,791	6,562
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,556	4,772	8,328
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,678	4,782	9,460

2011թ. դեկտեմբերի 31-ի և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 4,654 հազար դրամ (2010թ՝ 3,145 հազ. դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

Մաշվածության գծով ծախսը՝ 4,246 հազ. դրամ բաշխվել է վարչական ծախսերին (2010թ.՝4,384 հազ.դրամ բաշխվել է վարչական ծախսերին):

5 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը հետևյալն է՝

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	-	-
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում (տես ծանոթագրություն 15)	1,543	-
Տարեվերջի մնացորդ	1,543	-

SpringField Group Holding	11,564
Montexon Incorporated	11,512
Յուլյա Դանիելյան	11,407
Լեվոն Ամդիլյան	11,374
Ֆեստեկչյան Ֆաունդեյշն	11,038
Մարտին Մինասյան	9,642
Արթուր Բերդ	9,110
Aerosibservice LTD	8,238
Կարեն Մուսայելյան	7,691
Էմիլ Արզանգուլյան	7,675
Ահարոն Մելքոնյան	7,658
Ապավեն	7,500
AZAD Foundation	6,896
Բագրատ Կոստանյան	5,999
Գրիգոր Մելքոնյան	5,756
Union Gen. Armenienne	5,615
Անի Թումանյան	5,587
Արսեն Թումանյան	5,587
Արթուր Ջանիբեկյան	5,550
Պրոմեթեյ բանկ	5,530
Ռուբեն Գևորգյան	5,478
Վարդան Սիրմաքես	5,458
Վազգեն Գևորգյան	5,452
Արտաշես Շիրիկյան	4,656
Աշոտ Դանիելյան	3,833
Bogateor consulting limit	3,826
Լևոն Ղազարյան	3,780
Գարիկ Մարտիրոսյան	3,692
ARCA Foundation	3,665
Արցախբանկ ՓԲԸ	3,337
Արթուր Ջավադյան	2,500
Նորայր Գյուզալյան	2,314
Դավիթ Սահակյան	2,300
Արմսվիսբանկ ԲԲԸ	2,247
Թուֆենկյան հիմնադրամ	2,228
Երևանի Կոնյակի գործարան	2,000
Յուդիթ Սարյան և Վիկտոր Ջարուգյան	1,876
Քնար Բաբայան	1,876
Էդվարդ Գյուսերյան	1,859
Օնիկ Ազնաուրյան	1,846
Աշոտ Թումասյան	1,828
Արտակ Հովհաննիսյան	1,690
Մաթևոս Արամյան	1,482
Շուշան Կարապետյան	1,400
Արմեն Ուզունյան	1,104
Տիգրան Ուզունյան	1,101
Այլ	8,213
	793,668

10.Փոխառություններ

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություն	99,934	-	-
	99,934	-	-

2011թ դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխառություններն ստացվել են ԱՄՆ դոլարով տարեկան 7.5 % տոկոսադրույքով կապակցված կողմերից՝ 150 հազ. ԱՄՆ դոլար, Վահե Ամիրբեկյանից՝ 50 հազ. ԱՄՆ դոլար և Ալիսա Մնացականյանից՝ 50 հազ. ԱՄՆ դոլար: Հաշվարկված տոկոսը կազմում է 9,062 ԱՄՆ դոլար: Փոխառությունների մարման ժամկետն է 2012թ. օգոստոսի 22-ը:

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	31,827	360	117
Ստացված կանխավճարներ	231	870	-
Հատուցումներ աշխատակիցներին	8,021	583	1,380
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	2,453	1,799	862
	42,532	3,612	2,359

12.Հասույթ մրցույթների մասնակցության վճարներից

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Կենգուրու մրցույթից հասույթ	30,316	40,344
Ռուսական Արջուկ մրցույթից հասույթ	7,687	2,100
	38,003	42,444

13. Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	3,496	-
	3,496	-

14. Այլ ֆինանսական արդյունքներ, զուտ

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Դրամական միջոցներ	2,922	(1,083)
Փոխառություններ	(3,795)	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	226	(3)
	(647)	(1,086)

15. Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	(185)	(686)
Հետաձգված հարկ	1,543	-
	1,358	(686)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	(17,461)		2,143	
Շահութահարկ՝ 20% (2010թ.՝ 20 տոկոս)	3,492	20.00	429	20.00
Չնվազեցվող ծախսեր	2,134	12,22	257	11.98
Շահութահարկի գծով ծախս	1,358	7.78	686	31.98

16. Ծրագրային ծախսեր

2011թ. ընթացքում հիմնադրամի ըստ ծրագրերի կատարված ծախսերը ներկայացված են ստորև.

Այբ կրթական հանգույց	807,669
Կենգուրու մաթեմատիկական մրցույթ	28,486
Պատանի քիմիկոսների համայակական մրցաշար	1,984
«Ռուսական արջուկ» մրցույթ	7,597
Կրթաթոշակներ	26,730
ԱյբԱկումբ	2,616
Մելքոնյան կրթական հաստատության վերածնունդ	6,226
Այլ ծրագրեր	938
Ընդամենը	882,246

17. Ֆինանսական գործիքներ

17.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

17.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

18.2 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

19 Պայմանական պարտավորություններ

19.1 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով:

19.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունը չունի իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական դրության վրա:

19.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իշխանությունների մեկնաբանությունները կարող են տարբերվել և դրա ազդեցությունը կարող է զգալի լինել:

20.Գործարքներ կապակցված կողմերի միջև

20.1 Վերահսկողություն

Հիմնադրամի կապակցված կողմերն են՝

Դավիթ Յան
Դավիթ Փախչյանյան

Կազմակերպության գործարքներն կապակցված կողմերի հետ բացահայտված են ստորև.

Հազար դրամ	Մնացորդ առ 2010թ. դեկտեմբերի 31	Գործարքի արժեք 2011թ.	Մնացորդ առ 2011թ. դեկտեմբերի 31
Ստացված փոխառություններ			
Դավիթ Յան	-	40,171	40,171
Դավիթ Փախչյանյան	-	19,975	19,975
Տրամադրված փոխառություններ			
Մաթևոս Արամյան	4,404	4,404	-

20.2 Գործարքներ ղեկավարության հետ

Տնօրենը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառում է՝

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ՝ ներառյալ սոցիալական ապահովագրության վճարներ	16,957	10,332
	16,957	10,332